

<https://doi.org/10.46991/hc.2025.si1.055>

Preservation of inscription monuments in Soviet and post-soviet periods

Susanna Adamyan

<https://orcid.org/0009-0008-8941-4483>

NAS RA Institute of Archeology and ethnography, Ph.D

susannaiae@mail.ru

Keywords - Orbeli, residence, epigraph, tombstone, crosstone, church, topography.

After the creation of the Armenian alphabet, inscriptions were carved on the walls of historical-architectural monuments, temples and public buildings, which convey important information about the construction of the monument, builders, donations, contracts, etc. Throughout the territory of historical Armenia, there are thousands inscriptions of construction, donation, legal, memorial content have been preserved, the number of which increase every year as a result of construction and agricultural works, archaeological excavations.

The collection and preservation of epigraphs became especially important in the 19th century. It has always been in the center of attention of specialists, the state and responsible structures. However, it should be noted that during the Soviet and post-Soviet years, the preservation of these monuments in different regions of the republic was not performed properly, as a result of which the monument lost its historical value.

We have tried to present the problem of preservation of epigraphs in Armenia during the centenary.

Վիմագրական հուշարձանների պահպանությունը խորհրդային և հետխորհրդային շրջանում

Սուսաննա Ադամյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, պ.գ.թ.

History and Culture. Journal of Armenian Studies, special issue1, 2025, pp. 55-64.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 16.11.2024

Revised: 06.02.2025

Accepted: 20.04.2025

© The Author(s) 2025

Preservation of inscription monuments in Soviet and post-soviet periods
Վիմագրական հուշարձանների պահպանությունը խորհրդային և հետխորհրդային շրջանում
Հիմնաբառեր - Օրբելի, բնակավայր,
վիմագիր, տապանաքար, խաչքար, եկեղեցի,
տեղագիր:

Հայ գրերի գյուտից հետո արձանագրություններ են փորագրվել պատմաճարտարապետական կոթողների, տաճարների և հասարակական շենքերի պատերին, որոնք կարևոր տեղեկություններ են հաղորդում հուշարձանների կառուցման, կառուցող վարպետների, նվիրատվությունների, պայմանագրերի և այլ իրողությունների մասին: Պատմական Հայաստանի ողջ տարածքում պահպանվել են շինարարական, նվիրատվական, կանոնադրական, հիշատակագրային բնույթի հազարավոր արձանագրություններ, որոնց թիվն ավելանում է տարեցտարի հողաշինական և գյուղատնտեսական աշխատանքների, հնագիտական պեղումների արդյունքում:

Վիմագրական հուշարձանների ընդօրինակումն ու պահպանությունը կարևորվեց XIX դարից սկսած: Այն միշտ եղել է մասնագետների, պետության, պատասխանատու կառույցների ուշադրության կենտրոնում: Սակայն պետք է արձանագրել, որ խորհրդային և հետխորհրդային տարիներին հանրապետության տարբեր շրջաններում այդ ենթահուշարձանների պահպանությունը չի կատարվում պատշաճ կերպով, որի հետևանքով կոթողը կորցնում է իր պատմական արժեքը:

Սույն հոդվածում փորձել ենք ներկայացնել վիմագրերի պահպանության խնդիրը Հայաստանում հարյուրամյակի ընթացքում:

Сохранение литографических памятников в советский и постсоветский периоды

Сусанна Адамян

НАН РА Институт археологии и этнографии, к. и. н

Ключевые слова - Орбели, поселение, эпиграфия, надгробие, кресткамень, церковь, топограф.

После создания армянского алфавита на стенах исторических и архитектурных памятников, храмов и общественных зданий были вырезаны надписи, которые передают важную информацию о строительстве памятника, строителях, жертвованиях, контрактах и т.д. На всей территории исторической Армении сохранились тысячи надписей строительного, дарственного, юридического, мемориального характера, число которых

увеличивается с каждым годом в результате землестроительных и сельскохозяйственных работ, археологических раскопок.

Особое значение сбор и сохранение эпиграфий приобрели в 19-ом веке. Оно всегда было в центре внимания специалистов, государства и ответственных структур. Однако следует отметить, что в советские и постсоветские годы консервация этих субпамятников в разных регионах республики не осуществлялась должным образом, в результате чего памятник утратил свою историческую ценность.

Мы попытались представить проблему сохранности литографий в Армении в период столетнего юбилея.

* * *

Մուտք: Մարդկային հասարակության զարգացման վաղ շրջանից մարդն ընդունակ է եղել պատկերներ, նշաններ դրոշմել քարերին, որը դարերի ընթացքում մշակվել ու զարգացում է ապրել. ժայռապատկերներին փոխարինելու են եկել մեհենագրերը, սեպագրերը, արամեերեն, հունարեն, լատիներեն արձանագրությունները: Հայաստան արձանագրությունների փորագրումը սկզբնավորվել է գրերի գյուտից հետո, վաղագույնը Տեկոբի տաճարի արևմտյան մուտքի բարավորի արձանագրությունն է [Մանուչարյան, 1977, 39]: Ըստ մասնագետների՝ վերոնշյալ արձանագրությունը փորագրվել է 478-490 թթ. Սահակ Կամսարական իշխանի կողմից՝ վերակառուցման կամ գմբեթավորման կապակցությամբ [Ավագյան, 1986, 8; Ղաֆադարյան, 1962, 2, 42]: Արձանագրությունները եղել են ժայռաքերտերի, սահմանափաժան կոթողների վրա, տաճարների և հասարակական նշանակության տարբեր շինությունների պատերին: Առավել հարուստ ու բազմազան են եկեղեցիների պատերին փորագրված վիմագրերը, որոնք արտահայտում են հուշարձանի կառուցման, նվիրատվությունների, վանքին շնորհված արտոնությունների, պայմանագրերի, հարկային տերմինների, ճանապարհների, տուրքերի անվանումների մասին: Այդ առումով էլ վիմագրերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև լեզվի ուսումնասիրության տեսանկյունից, քանի որ <<Արձանագրությունների ժողովածուն մեծ գանձ է հայ բանասիրության համար և անհրաժեշտ է, որ հրատարակվի խնամքով>> [Մառը և հայագիտական հարցերը, 1968, 4]: Վիմագրերում հանդիպում ենք բարբառային, փոխառնված, խոսակցական բառեր, որոնք հարստացնում են լեզվի բառապաշարը: Պատմական Հայաստանի ողջ տարածքում պահպանվել են շինարարական, նվիրատվական, կանոնադրական, հիշատակագրային բնույթի հազարավոր արձանագրություններ, որոնք <<պարունակում են շատ տվյալներ ինչպես ժամանակագրության և տիրող տոհմերի ծագումնաբանության ճշտման, այնպես էլ հարուստ տեղեկություններ են պարունակում ժամանակի հասարակության ներքին կյանքի լուսաբանման համար>> [Մառը և հայագիտական հարցերը, 1968, 41]: Արձանագրությունները սովորաբար հուշարձանի ժամանակակիցը չեն, դրանց մեծագույն

մասն ավելի ուշ է փորագրվել՝ հուշարձանի կառուցումից հետո, տեսանելի տեղերում, հարթ մակերեսներին, շինության հիմնականում հարավային, արևմտյան և արևելյան ճակատներին, զարդաքանդակների մեջ, բացառիկ դեպքերում նաև՝ հյուսիսային հատվածում [Խալիփախյան, 1959, Գ, 47]: Վիմագրերի կարևորության և հավաստիության մասին են նշում պատմագիրներ Ստեփանոս Օրբելյանը և Զաքարիա Քանաքեռցին, ովքեր իրենց ուսումնասիրություններում օգտագործել են վիմագրերը որպես անփոխարինելի սկզբնաղբյուրներ:

Վիմագրերի ընդօրինակման և պահպանության գործընթացի սկզբնավորումը: XIX դարասկզբին հետաքրքրությունն արձանագրությունների ուսումնասիրման ուղղությամբ նոր թափ ստացավ: Վիմագրերի՝ որպես քարեղեն անգնահատելի սկզբնաղբյուրների հավաքման, ուսումնասիրման գործընթացն իրականացնելու համար կարևոր դեր ունեցավ ազգային, մշակութային և հոգևոր գործիչ, վիրահայոց հոգևոր առաջնորդ Ներսես Աշտարակեցին (1770-1857 թթ., Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1843-1857 թթ.), որը Սանահինի հոգևոր առաջնորդ Հարություն վարդապետ Տեր-Բարսեղյանցին ուղղված իր նամակում կարգադրում էր հավաքել Հայաստանում սփռված պատմական հուշարձանների որմերի և հուշակոթողների վրա փորագրված *<<ամենայն գլխատակազրութիւնս>>*՝ ժամանակի բնական և արհեստական ոչնչացումից գերծ պահելու համար [ԴՀՎ, պր. I, 1966, XVIII]:

XIX դարի 50-ական թթ. սկսած հաջորդաբար ուսումնասիրողները հավաքել, գրառել և հրատարակել էին հարյուրավոր վիմագրեր Պատմական Հայաստանի տարբեր շրջաններից, ինչպես նաև՝ Վրաստանից, Ռուսաստանից և այլն: Մեր օրերում ուսումնասիրված և հրատարակված վիմագրերի թիվն անցնում է տասը հազարից, և ժամանակի ընթացքում հողաշինարարական աշխատանքների, հնագիտական ուսումնասիրությունների արդյունքում բացվում են նոր հուշարձաններ և արձանագիր կոթողներ:

Վիմական հուշարձանների պահպանությունը կարևորվեց XIX դարավերջին և XX դարասկզբին՝ հիմք ունենալով Անիի հնագիտական աշխատանքների արդյունքում հայտնաբերված վիմագրերը: Հետագա տարիներին այն եղել է մասնագետների, պետության, պատասխանատու կառույցների ուշադրության կենտրոնում, քանի որ դրանք տեղեկություններ են հաղորդում բնակավայրերի և տոհմերի պատմության, ժողովրդագրական կազմի, կոթողը կերտող վարպետի մասին: Մեր կողմից գրեթե երկու տասնամյակ ուշադրության են արժանանում գրավոր այդ սկզբնաղբյուրները, որոնց թիվն ու բովանդակությունը համեմատվում է նախորդ շրջանում հրատարակված արձանագրությունների հետ: Ցավոք, պետք է արձանագրել, որ հանրապետության տարբեր շրջաններում այդ հուշարձանների պահպանությունը միշտ չէ, որ պատշաճ

կերպով է իրականացվում, որի հետևանքով կոթողը հաճախ կորցնում է իր պատմական վավերագրի արժեքը:

Մենք փորձել ենք ներկայացնել պատմական կոթողների պահպանության խնդիրն արտացոլող դրվագներ հանրապետության տարբեր բնակավայրերում խորհրդային և հետխորհրդային տարիներին: Այդ առումով վիճաբանական ուսումնասիրություններ կատարելիս բախվել և բախվում ենք տարբեր խնդիրների հետ, որոնց մի մասն առնչվում է տեղի բնակիչների չիմացության, երբեմն էլ՝ անտարբերության հետ:

Ցավով պետք է արձանագրել, որ այդ երևույթը նկատելի է եղել նաև XIX դարի երկրորդ կեսին: Տեղագիր-ճանապարհորդ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցն իր ճանապարհորդական ուղեգրություններում դժգոհությունն էր հայտնում, երբ 1880-1881 թթ. Յուլկերտից հայտնաբերված ուրարտական արձանագրությունը տեղի գյուղացիներից մեկը չիմացության պատճառով դարձրել էր սանդի քար [ՀԱԱ, 131, 140ա; Մ. Սմբատեանց, 1894, 374], կամ Արմավիր մայրաքաղաքի պարսպի քարերը շրջակա տարածքի բնակիչներն օգտագործել էին իբրև շինաքար: Մ. Սմբատյանցը նշում էր, *<<որ իրենց նախնեաց թանկագին յիշատակը խնամքով չեն պահպանում>>* [Սմբատեանց, 1895, 776], քանի որ դրանց բեկորները *<<այս ու այն կողմ թափած կամ պատերի հիմքեր եղած և կամ գոմերում դրուած էին>>* [Սմբատեանց, 1895, 290]:

Հետագա տարիներին մեծանուն գիտնական Հովսեփ Օրբելին բողոքում էր, երբ 1912 թ. Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու բարեկարգման աշխատանքների ընթացքում որմերը ծեփել և ծածկել էին եկեղեցու պատերին եղած միջնադարյան արձանագրությունները [ԴՀԿ, պր. I, 1966, XIII; Գրիգորյան, 2000, 27-28]: Դա տարածում ուներ նաև խորհրդային տարիներին, քանի որ եկեղեցիները վերածվել էին պահեստների և ներսից ծեփում էին զարդաքանդակները, խաչքարերն ու արձանագրություններն անտեսանելի դարձնելու նպատակով:

Վիճաբանների պահպանությունը խորհրդային և հետխորհրդային տարիներին: XVI-XVII դդ. սկսած տարածված էր նորոգչական աշխատանքների ընթացքում խաչքարերը, հարթ տապանաքարերը՝ որպես շինաքար օգտագործելու երևույթը, որը կիրառվում է մի քանի պատճառով՝ նախ սրբատաշ քարի առկայությունը և խաչքարի անվնաս պահելը, մյուս կողմից դրանք դիտարկվում էին իբրև սրբազան կամ սրբագործված քարեր: Սակայն հաճախ դրանք հուշարձանի որմերի շարվածքում գլխիվայր էին տեղադրվում, որի հետևանքով արձանագրությունը ևս խեղաթուրվում էր (Գեղամավանի Ս. Հովհաննես եկեղեցի, Նկ. 1): Ավելին՝ երբեմն կարևոր վկայագրի հատվածները հայտնվում էին այլ հուշարձանների պատերի մեջ: Այսպես՝ Կոտայքի մարզի Արամուս համայնքի Ս. Նշան կամ Ծիրանավոր [VII դար] եկեղեցին X դարում գոտևորվել է երկտող արձանագրությամբ, որի հեղինակն էր կաթողիկոս, նշանավոր հասարակական և քաղաքական գործիչ, պատմաբան Հովհաննես Դրասխանակերտցին (898-929 թթ.): Ցավոք, ժամանակի

ընթացքում եկեղեցին խոնարհվել է, և արձանագրության սրբատաշ քարերը հայտնվել են գյուղի մեկ այլ հուշարձանի՝ ներկայումս գործող Ս. Հակոբ եկեղեցու պատերի շարվածքում, որը հիմնանորոգվել է 1863-1867թթ. Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի նախաձեռնությամբ: Ցավոք, շինարարության ընթացքում վերոնշյալ արձանագրության հատվածները գլխիվայր հայտնվել են շինության տարբեր մասերում, որը դժվարացրել է արձանագրության ամբողջականության պահպանումը (Նկ. 2 ա, բ): Եվ եթե Ս. Սմբատյանցն այն ամբողջապես չհրատարակեր իր ուսումնասիրության մեջ, այսօր դժվար թե ունենայինք այդ վավերագիրը:

Արդի ժամանակաշրջանում հանդիպում ենք ցավալի մի իրողության ևս, երբ միջնադարյան խաչքարերը տեղադրվում են նորօրյա հանգուցյալների գերեզմաններին իբրև տապանաքարեր: Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանի Ծակքար գյուղի XIX դարի գերեզմանատանը տեղադրված է Նորատուսից բերված մեծադիր մի խաչքար՝ արձանագրությամբ: Իսկ Մաղինա համայնքի նորագույն գերեզմանատանը Շահինյան գերդաստանի անդամներն իրենց հանգուցյալ հոր՝ Կնյազի շիրիմին տեղադրել են միջնադարյան մի խաչքար [Նկ. 3]:

Ճամբարակի ենթաշրջանի Ձորավանք համայնքի հարակից բլրի վրա կանգուն է կիսաքանդ, անմշակ քարից կառուցված եկեղեցի, որը ենթադրաբար նորոգվել է XVIII-XIX դդ. ընթացքում, քանի որ նորոգության ընթացքում որպես շինաքար օգտագործվել են XI-XIV դդ. տասնյակ գեղաքանդակ խաչքարեր: Հայտնի է, որ կառուցող վարպետները երբեմն սրբատաշ քարերը կտրել և հարմարեցրել են եկեղեցու կառույցին՝ խաչքարի երեսը տեսանելի թողնելով: Սակայն Ձորավանքում պատերի մեջ տեղադրվել են խաչքարեր՝ իրար վրա պառկեցրած, որը հնարավորություն չի տալիս տեսնելու խաչքարի արտաքին տեսքը (Նկ. 4): Այստեղ նկատելի է վանդալիզմի մեկ այլ երևույթ, երբ խաչքարը դիմերեսով ծեփել են եկեղեցու արտաքին պատին՝ հակառակ անմշակ մասը դարձնելով տեսանելի: Հետագայում, երբ խաչքարը տեղից պոկվել և ընկել է (խաչքարը տեղում չգտանք), պատին մնացել են ոչ միայն խաչքարի նախշերի հետքերը, այլև առկա վիմագրի հինգ տողերը, որոնք ընթերցվում են ծածկագրության շրջագիր եղանակով: Դժվարընթեռնելի վիմագրում նկատելի է՝ առաջին տողում ...ՍԲ ...ՆԻԻԾ, իսկ հինգերորդում՝ՂԵՂԴ... տառաշարքը (Նկ. 5):

Հետխորհրդային տարիներին որքան էլ վիմագրերի պահպանությունը լինեք կարևոր և ուշադրության արժանի, այնուամենայնիվ, չիմացության կամ դիտավորության հետևանքով բախվում ենք մի շարք խնդիրների հետ: Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի Շինուհայր համայնքի Խաչեր կոչվող գերեզմանատան հարակից տան բակում կանգուն է եղել խաչքար [ԴՀՎ, պր. 2, 1960, արձ. 140], որի վրա նախորդ դարի 50-ական թթ. եղել է արձանագրություն՝ հետևյալ բովանաղությամբ. **ԿԱԼՆԿՆԵՑԱԻ ՄԲ ԽԱՂՉՍ ՊԱՏՈՒ/ԱԿԱՆ ՔԱՂ ՀԱՂԱՅԻՆ. Ի ԹՎ ՌԻԴ (1575 թ.)** (Նկ. 6): 1980-ական թթ.

քիվատակը հարթեցնելու հետևանքով վիմագիրը ոչնչացվել է, փոխարենը տեղադրվել է 1981 թ. և 2017 թ. հանգուցյալ Դանիելյանների նկարները (Նկ. 7):

Վերջին տարիներին հոգևոր կառույցների հիմնանորոգման աշխատանքների արդյունքում եկեղեցիներում սրբապատկերները տեղադրվում են հենց վիմագրերի վրա: Նման օրինակներ հանդիպում ենք Մաքրավանքում (երկու ավանդատների վերնամասում եղած վիմագրերը ծածկվել են սրբապատկերներով, Նկ. 8 ա, բ), Գեղարդավանքում (Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային ավանդատան մուտքի վերնամասում եղած վիմագիրը ևս ծածկվել է սրբապատկերով, Նկ. 9), Եղվարդի Ս. Աստվածածին եկեղեցում և այլուր: Միանշանակ այս թյուրիմացությունը շտկման կարիք ունի, և հնարավոր է սրբապատկերները տեղափոխել կամ տեղադրել եկեղեցու այն հատվածներում, որտեղ առկա չեն վիմագրեր, քանի որ դրանք՝ որպես ենթահուշարձաններ, կարևոր են յուրաքանչյուր կոթողի ուսումնասիրության պատմության համար:

Եզրակացություն: Վիմագրերը՝ որպես ենթահուշարձաններ, կարևոր տեղեկություն են հաղորդում ժամանակաշրջանի պատմության, բնակավայրերի, տոհմերի, սոցիալ-տնտեսական հարաբերությունների և այլնի մասին, ուստի դրանց պահպանությունը լիարժեք պետք է լինի պետության, համայնքի, ինչու չէ՞ նաև հայոց եկեղեցու հովանու ներքո: Վիմագրերը ժամանակի ընթացքում ոչնչանում են ոչ միայն մարդկային, այլև բնական գործոնների պատճառով, ուստի յուրաքանչյուր վիմագիր առանձնահատուկ հոգածության կարիք ունի:



Նկար 1



Նկար 2 ա

Preservation of inscription monuments in Soviet and post-soviet periods
Վիճաբարական հուշարձանների պահպանությունը խորհրդային և հետխորհրդային շրջանում



Նկար 2բ




Նկար 3



Նկար 4



Նկար 5



Նկար 6



Նկար 7



Նկար 8 ա



Նկար 8բ



Նկար 9

Գրականության ցանկ

Avagyan, 1986- S. Avagyan, Vimagrakan prptumner, Yerevan, 1986, ej: **(in Armenian)**

Grigoryan, 2000- Gr. Grigoryan, Hay vimagrut'yun, Yerevan, 2000, ej: **(in Armenian)**

DHV, pr. I, 1966- Divan hay vimagrut'yan, prak I, Ani k'aghak', kazmets' H. Orbelin, prak I, Yerevan, 1966: **(in Armenian)**

DHV, pr. II, 1960- Divan hay vimagrut'yan, prak II, Gorisi, Sisiani yev Ghap'ani shrjanner, kazmets' S. Barkhudaryany, Yerevan, 1960: **(in Armenian)**

Khalp'akhch'yan, 1959- Khalp'akhch'yan H., Ardzanagrut'yunnery haykakan chartarapetut'yan steghtsagortsut'yan kompozits'iaiyum, Ejmiatsin, 1959, G, ej 44-52: **(in Armenian)**

HAA, 131- Hayastani azgayin arkhiv, fond 57, M. Smbatyants'i arkhiv, gorts 131, Moskvayi kayserakan hnagitakan ynkerut'yan kanonadrut'yuny: **(in Armenian)**

Ghafadaryan, 1962, 2- K. Ghafadaryan, Tekori tachari V dari hayeren ardzanagrut'yuny yev mesropany aybubeni arrajin tarradzevery, PBH, 1962, t'iv 2, ej 39-54: **(in Armenian)**

Manuch'aryan, 1977- Al. Manuch'aryan, K'nnut'yun Hayastani IV-XI dd. shinararakan vkayagreri, Yerevan, 1977: **(in Armenian)**

Marry yev hayagitakan harts'ery, 1968-Marry yev hayagitakan harts'ery, Yerevan, 1968: **(in Armenian)**

Smbateants', 1894- M. Smbateants', Haykakan hnut'iwnner, Ararat, 1894, dektember, ej 373-375: **(in Armenian)**

Smbateants', 1895-M. Smbateants', Teghagir Geghark'uni tsovazard gawarri, Vagharshapat, 1895: **(in Armenian)**